

25 SEP 2010

ՀԱՐՄ.
2-2242

667
p-25


ԹՎ

ԲԱՄԲԱԿԻ ՆՅՈՒԹԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՑԱԴՐԱԿԱՆ

(ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱՐԴՈՒՆՔՆԵՐ Ի ԱԽՏ. ԴՊԲ. ՀԱԲԱՐԱՏՈՐ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Ուսու. բարգմանեց
Առ. Արտեմիսյան

Ձեռ



ԵՍԼԻ ԺՈՂՈՎՌՈՒԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈԽԿԱ

1931

26958

28 FEB 2013

Բամբակին վերաբերող «բաժանվող» նյութերը հատկացված են առաջին աստիճանի դպրոցների աշակերտների բամբակի և «գործվածքները և նրանց արտադրությունը» անցնելուս լաբարատորիական պարագաների համար: Նյութերը մշակվելու յին ողակային կարգով և սրանց կողմից: Ըստամենը, հաշված է, աչքի առաջ ունենալով 10-ական ողակ:

Դասարանում աշխատանքները պետք ե այնպես կաղմակերպված, լինեն, վոր ամեն մի ողակում լինեն և հոգուց վոչ ավելի, ըստ Վորում ողակի յուրաքանչյուր անդամ պետք ե ակտիվ մասնակցություն ունենա աշխատանքների մեջ:

Յեվ վլորովհետև ուսուցանողական այս պիտույքը մանկա-
վարժական մեր պրակտիկայի մեջ բոլորին նոր ե, և
ամեն մի ուսուցիչ չի կարող հանդաստրաստից կիրառել դա-
սարանում, ուստի հանձնարարում ենք ամեն մի ուսուցիչ
նախապես ինքը մշակի տվյալ նյութը՝ ըստ այն առաջադրու-
թյունների, վորոնք կան ժողովածուի մեջ։ Այդ նպատակով
ամեն մի ժողովածուի հետ արգում ե՝ 1 գրամ ներկ, 5 գրամմ
աղ, մի կտոր լինոլիկում և մի կտոր հաստ թել։ Ինչ վերա-
բերում ե ներկվաղ կտորին, գրա համար կարելի յի գործա-
դրել բամբակից հույսված ամեն մի սպիտակ կտոր։ Մնացյալ
փորձերը կարելի յե կատարել այն նյութեղենով, վորոնք
արգում են ժողովածուի հետ։

Նախքան աշակերտների հետ պարագմունքներին անց-
նելը, ուսուցիչը նրանց բացատրում և բամբակի մեր կյան-
քում ունեցած դերն ու նշանակությունը, վորից հետո միայն



39986-67

Уполн. Главл. В-4807

Заказ № 1928 Тираж 2000

Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

Նա անցնում ե բուն բամբակի ուսումնասիրությանը։ Աշակերտներին ուսուցիչը ցույց ե տալիս բամբակի ուսաբառնական մի նմուշ, բամբակի դաշտի նկարը, բամբակի բերքահավաքը և բացատրում ե, թե վո՞ր յերկրներում ե նա մշակվում։ Ուսուցիչը բաժանում ե աշակերտներին բամբակի կնգուղներ, մետաղյա խոզանակներ (կարդո-ժապավեն), խոշորացոյց, բարակ ասպակի, գունավոր թուղթ և ապա տալիս ե նրանց №№ 1, 2, 3, 4, առաջադրությունները։

Յերբ աշակերտները զննած կլինեն բամբակի կնգուղները—ուսուցիչն անցնում է բամբակի մշակության նյութին։

Յերեխաներին բաժանելու յե ժողովածուի մեջ յեղած բամբակը, մետաղյա խոզանակ և № 2, 3, 4 թերերը և տալու ե նրանց 5, 6, 7 և 8 առաջադրությունները։ Յեվ վորովհետև փոքր յերեխաները՝ դժվար կարող են ձեռքով պոկել բամբակը նրանից ժապավեն շինելու համար, ուստի սկզբում նրանք այդ կանեն մետաղյա խոզանակով, իսկ հետո արդեն ձեռքով ժապավեններ կշինեն, աշխատելով դարսել բամբակի մազերն իրարու մոտ՝ զուգահեռ։

Յերբ յերեխաները մանվածը կշինեն, հիմա միայն դասաւուն բացադրելու յե, թե ինչպես ե կատարվում բամբակի գործը, սանրումը և հյուսումը գործարանում։ Այս նպատակով նա եպիզիոսկոպով ցույց ե տալիս այն մեքենաները, վորոնց միջոցով կատարվում են այդ գործողությունները, իսկ յեթե եպիզիոսկոպ չկա, ուսուցիչը տալիս ե յերեխաներին դրանց նկարները ու լուսանկարները վորպեսզի իրանք տեսնեն ու դիտեն։ Յեվ քանի վոր յերեխաները դժվարությամբ կարող են հասկանալ նկարները, դասաւուն աշակերտների խմբակներին ամեն մի նկարի մասին տալիս ե պատշաճ բացատրություն։

Հետագա աշխատանքները կայանում են մանվածքի ուսումնասիրության մեջ՝ վորոշել նրա ամրությունը — ժողովածուի

մեջ գտնված նյութից։ Դրա համար յերեխաները աշխատանքին նվիրված ժամերին շինուալինի արկղիկի խոռվից կշեռքի թաթ, իսկ յեթե զպրոցում կա յեղջուրային կշեռք — հանում են մի թաթը և վորոշում նրա քաշը։ Դրանից հետո աշակերտներին տրվում են 9 և 10 առաջադրությունները։

Յերբ մանվածքին վերաբերյալ հետազոտական աշխատանքն ավարտված լլիինի — այժմ անցնելու յե հյուսվածքը։ Դասաւուն նախ բացատրում ե, թե ինչ ե կմքը և ինչ վերնակը, հետո բաժանում ե սպիտակ և գունավոր մանվածքը և հյուսվածքի համար շինած շրջանակը։ Շրջանակները պետք ե նախապես պատրաստված լինեն աշխատանքային դասերի ժամանակի։ Նրանք քյարգահի ձև ունեն և լինելու յեն 10×15 սանտիմետր չափերով։ Հիմա աշակերտներին տրվում ե 11-րորդ առաջադրությունը։ Հյուսվածք հյուսելուց հետո, դասաւուն բաժանում ե հյուսվածքի կտորները — միտկալ — սովորական քյազից կտրելով 2×10 սանտիմ. կտորներ, սարժ և սատինի, վորոնք գտնվում են ժողովածուի մեջ։ Հիմա միայն նա տալիս ե № 12 առաջադրությունը։

Յեթե զպրոցում կա տորքի մոդել — անհրաժեշտ ե նրա հետ ծանոթացնել աշակերտներին, ցույց տալով, թե ինչպես են կատարվում գործելու աշխատանքները տորքի վրա։

Ցանկալի յե, վոր յերեխաները աշխատանքի դասերին, իրենք, համաձայն ժողովածուի մեջ գտնված նկարի, շինեն ձեռքի տորքի պարզ մի մոդել։ Իսկ յեթե զպրոցում մոդել չկա — դասաւուն ծանոթացնում ե գրա հետ լսու նկալների, իսկ բարդ տորքերի հետ՝ լուսանկարների միջոցով։

Ավարտելով հյուսվածքին վերաբերյալ հարցերը, կարելի յե այժմ անցնել ներկարարությանը։

Դա բարդ չի ե մատչելի յե նույնիսկ 9—10 տարեկան յերեխաներին։ Ամբողջ աշխատանքը կայանում ե ներկելու

գործի նախապատրաստության և ներկելու մեջ։ Յեթե չյուսա-
վածքը նախապես չլվանանք, ստացվում ե կեղտոտ և ան-
հավասար ներկվածք։ Ուստի ամենից լավը և ներկելուց առաջ
լվանալ։ Այդ նպատակով նախապես պատրաստելու յի նատրի
8% անի լույծույթ, տալիս են յերեխաներին 100 խոր. սան-
տիմետրանոց քիմիական բաժակներ, լցնում են զրանց մեջ
70 խոր. սանոտ. լուծույթից, տալիս են միտլալի կոպիտ և
սպիտակ կտորներ և սկսում №13 առաջադրությունը։

Սպիտակացնելուց հետո անցնում են ներկելուն։ Դասա-
տուն պատրաստում ե ներկը։ Դրա համար նա վերցնում ե
ժողովածուի միջից 2 գրամմ բաց կապույտ անիլ խառնում
և 4 գրամմ սուզայի հետ և լուծում ե մի լիտր ջրի մեջ։ Հետո
միայն պատրաստ ներկաջուրը լցնում ե 10 բաժակների մեջ
և անցնում ե № 14 առաջադրության փորձերին։

Երբ № 14 առաջադրությունը կատարված ե, հիմա
անցնում են չթացման — չիթ շինելու աշխատանքներին։ Դրա
համար աշխատանքների դասերին լինոլետումի տրված կտոր-
ների վրա յերեխաները նկարում են մի շարք պարզ նկար-
ներ — (ծաղկներ, կենդանիներ), հետո սուր դանակով կըտ-
րում են այդ նկարները և կպցնում են — այնպես, վոր
նկարը լինի ուռուցիկ, իսկ ֆոնը ցած ընկած։


Լինոլեյումը կպցնում են $1\frac{1}{2}$ վերջոկանոց տախտակի
փայտի կտորի վրա դաճի (շտամպ) պես։ Դասատուն ցույց ե
տալիս յերեխաներին, թե ինչպես պետք ե չիթ շինելու
համար ներկեր պատրաստել։ Նա վերցնում ե ժողովածուի
միջից ոսւլա, պատրաստում ե միջին ամրության խմոր և,
լուծելով շփոթի պես տաք ջրում 1 գրամ բենզովուրպուրին
ներկը, լցնում ե սա ոսւլայի խմորի մեջ, լցնելով մեջը 5
կաթիլ գումմիարաբիկում։ Լավ խառնելով, բաժանում ե յե-
րեխաներին։ Նմանապես բաժանում ե նրանց բրդի կամ
շորի կտորներ, վորոնց վրա և քսվում ե ներկնդ մասսան—

ինչպես այդ անում ենք՝ կնիքի բարձիկների վրա ներկ
քսելու։

Ներկի մասսան հարթվելու յի, և յերեխաները սկսում են
դաձել։ Այժմ տրվում ե նրանց № 15 առաջադրությունը։
Չիթ ստանալուց հետո դասատուն բացատրում ե թե ինչ-
պես են չիթ շինում գործարաններում։ Դրա համար նա
ցույց ե տալիս չիթ պատրաստող մեքենաների լուսանկար-
ները։ Լարարատոր աշխատանքներն ավարտելուց հետո
յերեխաները մշակած նյութերից պատրաստում են ժողո-
վածուներ՝ ուստի յերեխաները ամեն մի առաջադրություն
կատարելուց հետո պետք ե իրենց աշխատանքներից ստացված
արդյունքները պահեն։ Ուսուցիչը այս մասին պետք ե բա-
ցատրի աշխատանքները դեռ չսկսած։


Ժողովածուները պետք ե ցուցադրվեն մանկական այն ցու-
ցահանդեսներում, վորոնք նպատակ ունեն առաջ բերել
նրանց մեջ «պոլիտեխնիկական աշխատանքների սոցմրցման»
պայմանագրերի կնքումն։

ՄԻԽ. ԳՈՍՏԵՎ,




ԳՀԱԴ ՄԵՔԵՆԱԿ

Նկարում ցույց ե տված բամբակ գղող մեքենայի յերկարավուն կտրը-վածքը: Սա ծառայում ե բամբակը լրարից բաժան-բաժան անելու և մաքրելու համար: Դա կատարվում է այսպես. բամբակը լցնում են № 1 մազի վրա վորի շարժումը ցույց ե տրված ալաքով: Ապա նա գնում ե № 2 զլանների տակ և այստեղ նա ընկնում ե գղող մեքենայի տակ — 3: Սա ունի երեք գդիչ, վորոնք շինված են կողքերը կարած մետաղյա ձողերից: Դիիչը խփելով բամբակին, բաժան-բաժան և անում նրա մազերը և տանում ե № 4 և 5 զլանների վրա: Այս գլանների մեջը դատարկ ե և միացած են քամի ներս բերող վինտիլատորի հետ, վորի շնորհիվ բամբակը ծծվում և կպչում ե զլանի մակերեսին, իսկ փորին ու կարճ մազերը մտնուն են զլանի մեջ և քամու ոգնությամբ դուրս են փչվում: Քալով ծանր մասերին, սրանք ցած են թափվում մազերի միջով № 6, № 7 արկղի մեջ, № 4 և 6 զլաններին կտած բամբակը պառույտ գալու հետևանքով գնում ե № 8 զլանի վրա, վորոնք նրան սիմում են շորի նման դարձնում և թողնելով № 9 սկալկայի մեջ, վորը շարժվում է № 10 և 11 զլաններից: Գղող մեքենայից բամբակը ցցում են սանրիչ մեքենայի մեջ,



ԳԼԱՎԻԿԱԾԻ ՍՅԱՌԻՉ ՄԵՔԵՆԱԿ (Չեսալիայ)

Թափահարիչ մեքենայից ստացված բամբակի № 1 կտորը գցվում է № 2 զլանի վրա և շնորհիվ շարժման ույժի վոլորվելով առաջ և գնում և անցնելով № 3 զլանի տակով — գնում ե № 4 զլանի վրա: Սա, առնելով կտորը, տանում է նրան հաստացլան—5—զլանի վրա, վորը պատած է կարտոնի—ժապավենով: Սանրումը տեղի յէ ունենում № 5 զլանի և գործող փոքրիկ զլանակների—6—№ 7 զլիմարկների միջոցով, վորոնք կազմված են կարդո ժապավեններից շինված թաղանթներից: Հենց վոր կտորը զլիմարկների ոգնությամբ սանրվում ե, նա անցնում և № 8 զլանի վրա, վորը դուրս է հանում և տալիս ե տատանվող սանրին (9): Սա սանրում է բամբակը, վորը, բարակ շղթայի նման, դուրս է գտիս և գնում ե ուղարկող և բոլորվող ժորակի մեջ, այսպիսով նա ստանում է ժապավենի տեսք, վորը հատուկ հարմարություններ ունեցող գործիքների միջոցով կանոնավոր շրջաններով դարսվում և № 10 գործիքի մեջ: Կարդոնի մեքենայից բամբակի ժապավենը գնում և մտնում է ժապավենի մեջ,




ԲԱՆԿԱԲՐՈՂԸ

Բանկաբրողի աշխատանքը կայանում է հետևյալում. ժապավենը № 1 զլանակներից գնում և № 2 ձգող մեքենայի մեջ, ուր ժապավենը ձգում և և անցնում վոլորող գործիքներից մեկի № 4 մեջ. Արա վերին մասում գտնվում է մի յեղձերանման մաս, վորս կաղմված և մեջը դատարկ № 5 զլանից, № 6 և 7 ամրացված յերկու ճյուղերով. Արանցից № 7-րդը խողովականման և Զգված ժապավենը ձգող ապարատից գնում և № 5 ցիլինդրի մեջ և ապա թե յեղջյուր

7-ի վրա, ճյուղի № 7 ստորին անցրից դուրս գալուց հետո ժապավենը փաթաթվում և № 9 մղիչին և ամրացնում և № 8 գլանին:


Բամբակի ժապավենը, ընկնելով յեղջյուրի ճյուղի վրա, վերջինիս բոլորվելու հետևանքով, նույնպես առաջ և գնում. Գալով ժապավենի ան մասին, վորը դեռևս չի լինում յեղջյուրի մեջ, սա սկսում և պարտվել իր առանցքի վրա և հետզհետեւ վոլորվել:

Զգված և գոլորված բամբակի թելը ամրացվում և գլանին և, շնորհիվ դանի անիմսերի պտտումի, փաթաթվում և, Դլանը բացի պտտվող շարժման, ունի և փոխարկվող շարժում. Թե դեպի վեր և թե դեպի վար Սկզբում ժապավենը դառնում և հաստ թել, հետո նա նորից մտնում և բանկաբրոցի մեջ և ստացվում և ավելի բարակ թել և վերջապես գնում և բանկաբրոց յերրորդ անգամ, վորտեղից գուրս և գալիս ողականի վատերի մեջ՝ ստանալու համար բարակ մանկածք:



ՈՂԱԿԱՎՈՐ ՎԱՏԵՐ


Դեռ չմշակված, բանկաբրոցից դուրս յեկած թելը դարսվում և № 8 շրջանակի վրա և ապա հազցնվում և փայտացցիկների վրա: (1) Հետո իլիկների վրայից գնում և ձգող գործիքի միջոցով (2), ապա թելատար 9-1 հետո մաքուկ 5-ի միջոցով դեպի շպուլկա: Շպուլկան գտնվում և մաքուկի վրա: Շպուլկան շարժում և մաքուկը, վորի վրա ողակ և հագցված (4): Մաքուկը մանարանի շարժումից հետ և մնում, և դրանով հետ և մնում և շպուլների շարժումից, վորի հետևանքով թելը սկսում և փաթաթվել, թուշի (11) կտորի վրա ամրացված են իլիկները. Ողակավոր 12 ձղիկը, վորը միացած և փաթաթիչ մեխանիզմին, աշխատանքի ժամանակ մեկ բարձրանում և, մեկ իջնում, Պողլիպնիկի-6-վրայի գլանները թելի -13-միջոցով շարժումը հաղորդում են իլիկներին: Փայտե ան տախտակը -14, վորի վրա ամրացված և թելի շրջանակը -15, Այսպիսով թելը, անցնելով ողակավոր գտներից, դառնում և ման վածք:



Շքանակ հյուսելու համար:




Մաքոք:




ԶԵՐՔԻ ՏՈՐՔ

Նկարի վրա մենք աեւնում ենք ձեռքի հասարակ տորք: №№ 1—2 և 3-ը դրանք առօքի հենարաններն են: Դեպի վերին հենարանները—2— ամրացված են № 4 Փքրանց, զորի վրայով կաշիների ողնությամբ գնում են յերկու ընմիջկաները—13: Ծեմիջկաներով վոտնաշարժիչի միջոցով մերթ բարձրանում, մերթ բիշում են: Աշխատանքի ժամանակ գործողը հերթով վոտքով սիմում և մեկ աջ, մեկ ձախ վատնաշարժիչը: Ծեմիջկան բարձրանում և առաջացներով մի անցք, զորի միջով ձեռքով զցում և մաքուքը չենց զոր մաքուքն անցնում և անցքեց, զորի միջով ձեռքով զցում և մաքուքնում և բերդոն: Բերդոն ամրացված և բատոնի հետ—15, զորը վերևում ունի տատանվող առանցք, և նման և փայտի մի կտորի—6: Սա գտնվում և վերին հենարանների վրա—2: Կտորը վոլորվում և վոլորանի—6 վրա կոթի—7—, վառիչի—9—և շնիկի—8—ոգնությամբ: Հմեր վոլորվում և վոլորանի—12—վրա և, յերբ գործողին հարկավոր և տալ հիմքը, նա բառում և թերից—10—, սա բարձրացնում և լծակը—11—և բաց և թողնում վոռնիչը: Գործարաններում գործադրում են ավելի բարդ ինքնաշարժ տորքեր, զորնք շարժման մեջ են ընկնում ելեքտրական ուժով:

Ժամանակակից տորքերի վրա մի գործողը միաժամանակ կարող և աշխատեցնել մի քանի տորքեր, այն ինչ հասարակ տորքի վրա բանեցնում է միայն մեկ տորք:




բաթակի (№ 1), սատինի (№ 2), սարժի (№ 3) էլեմենտածք:



ԿՏՈՐԵՂԵՆԻ ՅԵՐԵՔ ԳԼԱՆԵՐՈՎ ՆԵՐԿԵԼԸ

Պ Ա Ռ Ե Ս Ո Վ Կ Վ Ա Ն Կ Ծ Խ Ո Ա Մ Ե Կ Մ Ո Ր Ե Ն Ե Ր Կ Բ Լ Ո Վ Ա Վ Ո Ր Ո Ւ Յ Թ Ո ւ Ն :
Ն Կ Ա Ր Ե Բ Վ ր ա ց ո յ յ ց տ վ ա ծ պ լ յ ս ո ւ ո վ կ ա ն ո ւ ն ի թ ո ւ շ ե մ զ ի շ է յ ե ր ե ք գ լ ա ն ։ Մ Ե -
ջ բ ն գ լ ա ն ս ի վ ր ա պ ա տ ա ծ ե լ ի ն ո ւ մ ս ո վ ո ր ա բ ա ր ը ը ո ո ն գ ա կ ա մ ե ր ո ն ի ս , ի ս կ
վ ե ր ի ն ն ո ւ ս ա ս ո ր ի ն ը փ ա փ ո ւ կ ո ւ տ ի ն ։ Մ ի ջ ն ո ւ մ ո վ տ ա շ ա ր ը բ ա ժ ա ն վ ա ծ
ե լ յ ե ր կ ո ւ մ մ ա ս ի ։ Կ ո տ ո ւ մ ս կ լ յ ր ո ւ մ դ ն ո ւ մ ե ն պ լ յ ս ո ւ ո վ կ ա յ ի տ ա շ ա ր ի ա ռ ա ջ ի ն
բ ա ն ց ն ո ւ մ , ո ւ ր ն ե ր ն թ ա թ ա խ ո ւ մ ե ն ն ե ր կ ի մ ե ց , հ ե տ ո ա յ տ ե ր կ ի ն ա ն
ա ն ց ն ո ւ մ ե լ գ ո ր գ մ ա ս , ո ւ ր կ ո տ ո ւ մ տ ե ղ ա փ ո ւ մ ե լ , ա պ ա ա ն ց ն ո ւ մ ե
մ շ է շ զ լ ա ն ն ե ր ի վ ր ա և ն ո ր ի թ ա թ ա խ ո ւ մ ե լ յ ե ր կ ո ր դ բ ա ժ ա ն մ ո ւ ն ց ի
տ ա շ ա ր ի մ ե ց , ի ս կ ա յ դ տ ե ր կ ի ց ա ն ց ն ո ւ մ մ զ ի շ է զ ա ն ն ե ր ի վ ր ա ։ Ե լ ր կ օ ր դ
մ զ ի շ ո վ ա ն ց ն ե ր ո ւ ց տ ա չ կ տ ո ւ ր ս ո ւ կ ո ւ մ ե լ զ ր ո վ ։ Մ զ ե լ ս ա ց հ ե տ ո կ տ ո ր ը
կ ա մ հ ա ր թ ո ւ կ վ ո ւ մ ե կ ա մ ծ ա լ վ ո ւ մ ։



ՄԵԴ գլանանի դաջող մեքենա:



-39852

НДР
2-1

Անվետ
Бесплатно



Раздаточный материал
по хлопку

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР,
Москва, центр, Никольская, 10.

ՀԱՅ |
ՑՐ |

«Ազգային գրադարան»



NL0298689

26 988

APM.

2-2242